

Հարգելի պարոն Մանուկյան

Ծանոթանալով ՀՀ Արդարադատության նախարարության կայքում տեղադրված 'Անձնական տվյալների պաշտպանության մասին' ՀՀ օրենքի նախագծի վերջին տարբերակի հետ (02.10.2014թ.) անհրաժեշտ ենք համարում հոդված առ հոդված ներկայացնել մեր դիտողություններն ու առաջարկությունները:

Բայց միննույն ժամանակ, խնդրում եմ Ձեզ սույն Օրենքի նախագծի շրջանակում քննարկման առարկա դարձնել նաև փաստաբանների և իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից անձնական տվյալների մասին տեղեկատվություն փնտրելու և ստանալու իրավունքի իրացման հետ կապված հարցերը:

Մեր կարծիքով փաստաբաններն ու իրավապաշտպան հասարակական կազմակերպություններն իրենց գործառույթներն իրականացնելու ընթացքում պետք է կարողանան առանց որևէ խոչընդոտի ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը ոչ միայն իրենց վտահորդի կամ շահառուի, այլ նաև նրանց շահերը պաշտպանելու ընթացքում ի հայտ եկած այլ անձանց մասին, որպեսզի լիարժեք պաշտպանություն իրականացնեն:

Առդիր՝ դիտողություններն ու առաջարկությունները Օրենքի նախագծի վերաբերյալ:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Գործադիր տնօրեն

Դիտողություններ և առաջարկություններ
«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Հոդված 3. Հիմնական հասկացությունները

Սույն օրենքի 3-րդ հոդվածի 16-րդ կետում և տեքստում օգտագործվում է «լիազորված անձ» բառակապակցությունը: Սակայն **Օրենքի 17-րդ հոդվածում** հանդիպում ենք նաև «անձնական տվյալները պաշտպանող լիազոր մարմին» հասկացությանը, որի մասին Օրենքի 3-րդ հոդվածում ոչինչ նշված չէ:

Հոդված 6. Հավաստիության սկզբունք

Լիազորված անձը, մշակողի միջոցով պետք է թարմացնի տվյալները: Այդ տվյալները պետք է պարբերաբար թարմացվեն, որպեսզի ընտրացուցակներում, կենսաթոշակառուների, հաշմանդամների, նպաստառուների և այլ ցուցակներում անճշտություններն ու հին տվյալները չպահպանվեն: Սակայն նախադասության մեջ օգտագործված է հնարավորինս թարմացված՝ բառակապակցությունը, որն արդեն անորոշություն է առաջացնում, ինչ է նշանակում հնարավորինս թարմացված, արդյո՞ք իմպերատիվ պահանջ չպետք է լինի այս դեպքում:

Հոդված 7. Սուբյեկտների նվազագույն ներգրավման սկզբունքը

Հոդված 7, 2-րդ մաս - Ինչու՞ այս իրավունքը չի տարածվում ֆիզիկական անձանց նկատմամբ ևս:

Հոդված 7, 3-րդ մաս – ‘ֆիզիկական անձ՝ ասելով ո՞ւմ նկատի ունեք՝ անձին, փաստաբանին, լրագրողին կամ այլ անձի:

Հոդված 9, 4-րդ մաս, 1-ին ենթակետ – Նախադասությունն անհասկանալի է, հստակ չի ձևակերպված:

Հոդված 9, 4-րդ մաս, 3-րդ ենթակետ – Բանավոր փոխանցումը վիճելի է և դժվար ապացուցելի, անընդունելի է այս եղանակը:

Հոդված 9, 4-րդ մասի ենթակետերից հետո, կրկին նշված է 4-րդ: Այս «4-րդ մասը» հակասում է 5-րդ մասին: Պետք է ավելի հստակ ձևակերպում տրվի, բացի այդ չի ընկալվում, որ օրենքի մասին է խոսքը:

Հոդված 9, 7-րդ մասի ըստ Օրենքի նախագծի՝ «համաձայնությունը ստանալու փաստն ապացուցելու պարտականությունը կրում է մշակողը»: Ստացվում է, որ Օրենքի նախագծի 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերը տարբեր մեկնաբանություններ ունեն:

Հոդված 9, 10-րդ մաս - Ինչպե՞ս է այս մասի պահանջը համաձայնեցվում տարբեր կառույցների պահանջների հետ, օրինակ՝ ընտրական հանձնաժողով, ոստիկանություն, անձնագրային բաժիններ, ազգային արխիվ, գոնկոմիսարիատ, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրանցման բաժիններ, սոցիալական ծառայություններ և այլն, ինչպես է արագ փոփոխված տեղեկատվությունը փոխանցվում այս կառույցներին՝ ի գիտություն: Սա լուրջ համակարգային խնդիր է, որը պետք է սույն Օրենքով առաջնային լուծում տրվի:

Հոդված 10, 2-րդ մասի 1-ին ենթակետ - Ստացված անձի անուն, ազգանուն, հայրանունը բավարար չեն լինի անձի նույնականացման համար, անհրաժեշտ է այլ չափորոշիչներ նախատեսել:

Հոդված 10, 1-ին մասում ոչինչ չի ասվում այն մասին, թե ի՞նչ հավանականությամբ կիրականացվի հավաքագրվող տվյալների գաղտնիության պահպանությունն ու անվտանգությունը դրա մշակման ընթացքում, և դրանից հետո, ո՞վ և/կամ ո՞ր կառավարման մարմինն է դա իրականացնելու և վճարելու դրանց մշակման համար, ինչպես են գոյանալու ֆինանսական աղբյուրները և կառավարվելու ծախսերը:

Հոդված 11, 3-րդ մաս - Պայմանագրի առկայության դեպքում, կարծում ենք, հարցի դատական կարգով լուծումը ավելորդ է, քանի որ բոլոր պահանջները կարելի է ամրագրել պայմանագրում: Դրա համար պետք է լինի տիպարային պայմանագրի ձև և դատարան կարելի է դիմել միայն այն ժամանակ, երբ պայմանագրի պահանջները չեն կատարվում:

Հոդված 12, 1-ին մաս – ի՞նչ է նշանակում հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, և որո՞նք են դրանք: Բացի այդ, սույն օրենքի նախագծի 3-րդ հոդվածում դրա հասկացության մասին չկա նշում: Եվ ո՞ր Օրենքով է նախատեսված:

Հոդված 12, 2-րդ մաս – առաջարկում ենք լրացնել՝ անձնական տվյալներ կրողը պետք է տեղեկացված լինի անձնական տվյալների մշակման դադարեցման մասին, իսկ այդ տեղեկատվությունը նրան պետք է փոխանցվի գրավոր ծանուցման միջոցով:

Հոդված 14, 3-րդ մաս - Քանի որ ֆիզիկական անձը նաև լիազորված անձ է, ապա հարց է առաջանում, որտեղի՞ց կարող է նա իմանալ, որ առաջադրանքը չի համապատասխանում օրենքի պահանջներին:

Հոդված 15, 1-ին մաս - Իսկ ինչպե՞ս է իրականացվում այդ իրավունքը, ի՞նչ կարգով, ի՞նչ եղանակով և ի՞նչ ժամկետներում:

Հոդված 15, 2-րդ մաս – Արդյո՞ք որևէ պատասխանատվություն չի նախատեսվում մշակողի և լիազորված անձի նկատմամբ նրանց կողմից կատարված անորակ և ոչ պատշաճ աշխատանքի համար: Անձնական տվյալների կրողը, անգամ մեկ

տառասխալի պատճառով, բազմաթիվ դժվարությունների առջև է հայտնվում՝ կրելով ոչ միայն նյութական վնասներ, այլ նաև բարոյական: Օրինակ՝ իր կամ մահացածի ազգանվան տառի կամ ծննդյան տարեթվի կամ անձնական այլ տվյալների անճշտությունների պատճառով տարիներով մարդը չի կարողանում ժառանգություն ընդունել: Արդյունքում այս տեխնիկական հարցերով ծանրաբեռնվում են դատարաններն:

Հոդված 15, 3-րդ մաս – Ի՞նչ կարելի է հասկանալ «հասանելի ձևով» արտահայտության տակ, ցանկալի է ավելի կոնկրետ ձևակերպել խնդիրը:

Հոդված 15, 4-րդ մաս - Իսկ ինչո՞ւ փոստային տարբերակը չի ներառվել և նշվել է միայն էլեկտրոնային եղանակը: Չէ՞ որ ոչ բոլորն ունեն թվային ստորագրություն կամ համակարգիչ: Անընդունելի է այս սահմանափակումը:

Հոդված 17. - Նշված «անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի» մասին բացատրություն չկա Օրենքի 3-րդ հոդվածում:

Հոդված 18, 2-րդ մաս - Սա աշխատանքների անհրաժե՞շտ և բավարա՞ր ծավալ է այն անձանց համար, որոնք զբաղվում են անձնական տվյալների մշակմամբ:

Հոդված 18, 3-րդ մասում ոչ մի տեղ նշված չէ, թե ո՞ր դեպքում և ի՞նչ հիմքերով մշակողն իրավունք ունի անձնական տվյալների կրողին չտրամադրել նրա անձնական տվյալները և ի՞նչ կարգով է պարզաբանելու՝ գրավոր, թե՞ բանավոր:

Հոդված 19. - Առաջին հերթին, անձնական տվյալներ մշակողը պետք է ունենա համապատասխան լիցենզիա, որն իրավունք է տալիս գործունեություն ծավալել անձնական տվյալներ հավաքելու և մշակելու համար: Այդ լիցենզիաները պետք է տրվեն որոշակի ժամկետով, որի ժամկետը լրանալուց հետո մշակող անձը պետք է կրկին հայցի այդ գործունեությամբ զբաղվելու համար:

Հոդված 19, 6, 7 մասեր - Ո՞վ է ապահովում ծրագրային պաշտպանությունը տվյալների մեքենայացված մշակման համար: Ո՞վ է թարմացնում այդ ծրագրերը: 7-րդ հոդվածում այս մարմինը, որն ապահովում է տվյալների անվտանգությունը, նա պետք է զբաղվի նաև աշխատակազմի պատրաստմամբ և որակավորմամբ, որն իրականացնում է տվյալների հավաքումն ու մշակումը:

Հոդված 20, 5-րդ մաս - Ո՞ր լիազոր մարմնի մասին է խոսքը: Հստակ չէ:

Հոդված 21, 1-ին մաս - Ի՞նչ ժամկետում: Անհրաժեշտ է ժամկետ սահմանել:

- " – **2-րդ մաս** Պետք է լինի/սահմանել հստակ ընթացակարգ

- " – **5-րդ մաս** Մշակողը պարտավոր է ոչնչացնելուց հետո անմիջապես տեղեկացնել անձնական տվյալների ոչնչացման մասին:

Հոդված 22. - Հստակեցնել, թե ո՞ր լիազոր մարմնի մասին է խոսքը՝ մշակող թե՞ առանձին հսկողություն իրականացնող լիազոր մարմնի:

- " – **1-ին մաս** - «...հսկողություն իրականացնող այդ մարմնին» - ո՞րն է այդ մարմինը և ո՞ւմ է այն ենթարկվում, ինչպես է այն ձևավորվում և ֆինանսավորվում: Այս մարմնի հասկացության մասին չի խոսվում նաև սույն Օրենքի նախագծի 3-րդ հոդվածում:

- " – **2-րդ մաս** - 'սեղմ ժամկետում՝ բառակացությունը փոխարինել կոնկրետ ժամկետով, հստակեցնել:

- " – **3-րդ մաս** – Հասկանալի չէ, երկու մարմնի մասին է խոսքը, բայց հստակ չէ:

Հոդված 23. Ի՞նչ իմաստ ունի ծանուցումը: Եթե լիազոր մարմինը պատասխանատու է անձնական տվյալների (ավելի շուտ՝ տվյալների բազայի) ծրագրային, կազմակերպչական, մեթոդոլոգիական և տեխնոլոգիական պաշտպանության համար, և իրավունք չունի իմանալ անձնական տվյալների էության մասին, ապա ինչու՞ նրան տեղյակ պահել, որ տվյալ պահին մշակողը տեղեկություն է հավաքում կոնկրետ անձնական տվյալներ կրողի վերաբերյալ:

Հոդված 24. Ի՞նչու Արդարադատության նախարարության կազմում: Այն պետք է լինի անկախ գործակալություն (ոչ մի նախարարության կամ գերատեսչության կազմում չպետք է լինի): Նրա ղեկավարությունը պետք է ընտրվի Ազգային ժողովի կողմից և հաշվետու լինի միայն վերջինիս: Պետք է հստակ ձևակերպել նրա գործառույթները, պարտականությունները և կառուցվածքը: Սույն մարմինը բնակչության անձնական տվյալների անվտանգության երաշխավորն է:

- " – **8-րդ մաս** – հասարակական հիմունքներով խորհրդատվական մարմին ստեղծելն ավելորդ է և անիմաստ: Պետք չէ Օրենքը ծանրաբեռնել:

Հոդված 25, 1-ին մաս – ի՞նչ կապ ունեն հասարակական կազմակերպությունները և ո՞վ է որոշելու այդ իրավապաշտպան ՀԿ-ների ցանկը:

- " – **5-րդ մաս, 2-րդ ենթակետ** - «չի կարող անձամբ ...», իսկ ազգականների կամ բարեկամների միջոցով կարո՞ղ է, ինչպես անում են ՀՀ ԱԺ պատգամավորները: Այս նույն կետի պահանջների թվում պետք լրացնել՝ անկուսակցական լինելը, քաղաքական և տնտեսական վերնախավում՝ ազգականներ չունենալը և բարձրագույն տեխնիկական կրթության առկայությունը:

Հոդված 26, 2-րդ մասի 2-րդ ենթակետից հետո լրացնել 3-րդ ենթակետ՝ դատարանի որոշմամբ:

Հոդված 27, 2-րդ մաս - Ոչ հստակ ձևակերպում է:

Հոդված 27, 4-րդ մաս - Պետք է լինի պայմանագիր, այլ ոչ թե նախագիծ: Պայամանագրի նախագիծը դեռևս փաստաթուղթ չէ:

Հոդված 28 Ինչու՞ պետք է օրենքն անհապաղ ուժի մեջ մտնի 2015թ. հունվարի 1-ից, կարծում ենք, որ սույն Օրենքը պետք է ունենա իրավակարգավորող առանձին իրավական ակտեր, որոնք թույլ կտան որոշ ժամկետում ձևավորել այս կառույցը: Չնայած հասկանալի չէ, թե սույն Օրենքի նախագծի 7-րդ հոդվածի պահանջն ինչու պետք է ուժի մեջ մտնի 2019թ. հունվարի 1-ից: